

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍԿԸ

Հոգեկան անհուն ուրախութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունեմ նորոգ օծեալ Հայրապետը Ամենայն Հայոց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը: Սա խորախորհուրդ պահուն դարերէն եկող ու դարերու գացող Հայաստանեայց եկեղեցւոյ պարզ, սակայն խորիմաստ բառերով կ'ըսեմ հոգիիս բովանդակ անկեղծութեամբ ու հաւատփիս բովանդական գորութեամբ՝ «Ուրախ Լեր Սուրբ եկեղեցի», ուրախ լիբ, Հայաստանեայց Առաջնական Սուրբ եկեղեցի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որովհետեւ այսօր սուգի փողը պատռեցաւ, եւ մենք ունեցանք Ամենայն Հայոց Հայրապետ:

Սիրելի Վեհափառ, հոգեւոր եղբայր ի Քրիստոս, վստահ եմ կ'անդրադառնաք, որ դուք Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս ծանր պատասխանատուութեան կը կոչուիք Աստուծոյ հրամանով եւ մեր հայրենիքի կեանքը, մեր ազգին կեանքը ու նաեւ մեր եկեղեցւոյ կեանքը ամէն տեղ շրջապատուած է նոր տագնապներով, նոր անորոշութիւններով եւ նոր մարտահրաւերներով: Այս տագնապալից կացութեան դիմաց Հայաստանեայց եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ:

Մենք, սիրելի Վեհափառ, որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Ձեր կողքին պիտի դառնանք Ձեզի լծակից ու գործակից, Հայաստանեայց մէկ եկեղեցւոյ հաւատփի նոյն առաքելութեան ճամբուն վրայ: Մենք, միասնաբար, Հայաստանեայց եկեղեցին, որպէս հաւատփի առաքելութիւն, պիտի տանինք մեր ժողովրդին, որպէս զի մեր ժողովրդի կեանքը քրիստոնէական հաւատով կենեացործուի, իմաստաւորուի եւ հարստանայ: Մեր Հայրենիքը անցնող շարքաւոր ընթացքին մեծ տագնապներու դիմաց գտնուեցաւ, եւ մեր հայրենիքին ու մեր ամբողջ ժողովուրդին հետ ի սփիւռս աշխարհի լացինք, դատապարտեցինք, ցաւեցանք ու ընդվզեցանք, եւ այսօր, հազար փառք Աստուծոյ, սահաւսիկ հայրենիքը սկսած է վերականգնիլ իր զաւակներուն հաւատով, միասնական հոգիով, եւ սա պահուն ի՛նչ երջանկութիւն է մեզի համար Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողքին տեսնել նորոգ նշանակեալ վարչապետը: Այս երեսոյթը մեզի նոր հաւատք, նոր յոյս, նոր տեսիլք կը ներշնչէ, եւ մենք, սիրելի Վեհափառ, պիտի՝ ծառայենք, պիտի ծառայենք եւ մի՛շտ պիտի ծառայենք մեր հայրենիքին ու մեր ազգին: Մեր պարտքը ծառայութիւնն է, մ՛նր պատիւն ու փառքը դարձեալ ծառայութիւնն է: Սա պահուն Ձեզի կը վստահեցնեմ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ մենք անձնապէս ձեզի հետ պիտի ըլլանք, որպէս զի միասնաբար, գործնապէս մասնակից դառնանք եկեղեցւաշինութեան, ազգաշինութեան ու հայրենաշինութեան այնքան նուիրական առաքելութեան:

Թող Աստուած բարիքներով, նորանոր իրագործումներով եւ յաջողութիւններով լեցնէ Ձեր ծառայական կեանքը, թող Աստուած միշտ շէն, նուասան պահէ Հայաստանեայց եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Երուսաղէմի, Կոստանդնուպոլսոյ հայոց Պատրիարքութիւնները, թող Աստուած միշտ զօրեղ, անվթար, անասան պահէ մեր սիրելի հայրենիքը իր պետականութեամբ, այժմ եւ միշտ ու յաւիտեանս. Ամէն: